**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«23» հունվարի 2023թ. N 04-Ն

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ, ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻՆ ԿԻՑ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԵՑՄԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 8-րդ կետերով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի մարտի 20-ի N 183-Ն հրամանով հաստատված Վարդան Գևորգյան և Ավրորա Ղազարյան ֆիզիկական անձանց անհատական հաշվի քաղվածքի աշխատանքային տեղեկությունները, ինչպես նաև Ավրորա Ղազարյանի սույն թվականի հունվարի 13-ի դիմումը՝ համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցության մասին

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կասեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար 1 իրավաբանական անձի շինարարության իրականացման թվով 1 լիցենզիա և 1 ներդիր 2022 թվականի նոյեմբերի 28-ից (համաձայն Հավելված 1-ի):

2. Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար 1 իրավաբանական անձի շինարարության իրականացման թվով 1 լիցենզիայի և 1 ներդիրի կասեցումը համարել

վերացված 2022 թվականի դեկտեմբերի 14-ից, 1 իրավաբանական անձի շինարարության իրականացման թվով 1 լիցենզիայի և 1 ներդիրի կասեցումը համարել վերացված սույն թվականի հունվարի 14-ից (համաձայն Հավելված 2-ի):

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

1) ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն,

2) համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

1/23/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2023թ. «նոյեմբերի» «23»

N 04-Լ հրամանի

ՑԱՆԿ

**Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի 1 իրավաբանական անձի շինարարության իրականացման թվով 1 լիցենզիայի և 1 ներդիրի կասեցման.**

| **հ/հ** | **Լիցենզավորված իրավաբանական անձի անվանումը և հասցեն** | **Լիցենզիայի սերիան, համարը, գործունեության տեսակը, ոլորտը** |
|---|---|---|
| 1. | 2. | 3. |
| 1. | «Ռոմբուս» ՍՊԸ<br>ք. Երևան, Էրեբունի, Աճեմյան փ., տ. 67 | ՔՊԼ 18422-01-Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝<br>**բնակելի, հասարակական և արտադրական** |

**Լիցենզավորման վարչության պետ՝** **Նշան Մարտիրոսյան**

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2023թ. «հուլիսի» «23»

N 04-Ա հրամանի

ՑԱՆԿ

**Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի 2 իրավաբանական անձի շինարարության իրականացման թվով 2 լիցենզիայի և 2 ներդիրի կասեցման վերացման.**

| **հ/հ** | **Լիցենզավորված իրավաբանական անձի անվանումը և հասցեն** | **Լիցենզիայի սերիան, համարը, գործունեության տեսակը, ոլորտը** |
|---|---|---|
| 1. | 2. | 3. |
| 1. | «Էրշին» ՍՊԸ<br>Լոռու մարզ, գյուղ Գուգարք,<br>Կոտեջային 2 փ., 30 | ՔՊԼ 18050-01-Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝<br>**բնակելի, հասարակական և արտադրական** |
| 2. | «Աս շին» ՍՊԸ<br>ք. Երևան, Արաբկիր,<br>Ազատության պ., 1/18 | ՔՊԼ 15426-01-Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում՝<br>**բնակելի, հասարակական և արտադրական** |

**Լիցենզավորման վարչության պետ՝** **Նշան Մարտիրոսյան**